



Իրավահավասարություն բոլորի համար

Հաշմանդամության հիմնախնդիրների
իրավական ասպեկտի վերլուծություն

«Ունիտոն» հասարակական կազմակերպություն

Երևան 2007

Նախաբան

Սույն հրապարակման նպատակն է հանրամատչելի կերպով ներկայացնել հաշմանդամության հիմնախնդիրներին ամենօրյա Հայաստանի օրենսդրության վերլուծությունը՝ դրա իրացման տեսանկյունից: Ձեռնարկում անդրադարձ է կատարվել հաշմանդամների իրավունքներին և օրինական շահերին վերաբերող հիմնական գործող իրավական ակտերին: Բացի դրանից, ներկայացվում է Եվրոպայի Խորհրդի թիվ Rec(2006)5 Հանձնարարականում տեղ գտած 2006-2015թթ. հաշմանդամության ոլորտում գործողությունների ծրագրի բովանդակությանը, որը կարող է հիմք հանդիսանալ հաշմանդամության ազգային ռազմավարության կատարելագործման համար:

Ձեռնարկը օգտակար կլինի հաշմանդամների և նրանց ընտանիքների անդամների, հաշմանդամության հիմնախնդիրներով զբաղվող պետական մարմինների, պաշտոնատար անձանց, ոլորտում աշխատող ՀՎ-ների, իրավաբանների, իրավաբանական ֆակուլտետների ուսանողների, ինչպես նաև բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերում հաշմանդամության հարցերի նկատմամբ:



Սույն հրապարակումն իրականացվում է Բաց Հասարակության Ինստիտուտի և Նիդեռլանդների Կառավարության ֆինանսական միջոցներով

© «Ունիսոն» ՀՎ, 2007

Համաձայն Հաշմանդամների իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի, «հաշմանդամների թվին դասվում են այն մարդիկ, ովքեր ունեն երկարատև ֆիզիկական, մտավոր, ինտելեկտուալ կամ զգայական խանգարումներ, որոնց զուգակցումը տարբեր խոչընդոտների հետ կարող է խանգարել նրանց ապրել հասարակությունում լիարժեք և արդյունավետ կերպով՝ այլոց հետ հավասար հիմունքներով¹⁾»:

2007թ. հունվարի 1-ի դրությամբ, Հայաստանի Հանրապետությունում գրանցված են եղել շուրջ 148000 հաշմանդամներ, որոնցից 41% կանայք են, իսկ 6%՝ հաշմանդամ երեխաներ: Իրեն ժողովրդավարական հռչակած ցանկացած երկրում պետք է պաշտպանվեն մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները: Ակնհայտ է, որ անիմաստ է խոսել իրավունքների և ազատությունների մասին, եթե բացակայում են դրանց իրացման երաշխիքները: Միայն այն դեպքում, երբ հասարակության յուրաքանչյուր անդամ, այդ թվում նաև հաշմանդամը, իրեն վերապահված բոլոր իրավունքներից օգտվելու ռեալ հնարավորություն ունենա, երկրում կկայանան ժողովրդավարության ինստիտուտները և կհաստատվի իրավահավասարություն բոլորի համար:

¹⁾ Հաշմանդամների իրավունքների մասին կոնվենցիա, 1-ին հոդված: Թարգմանությունը մերն է (խմբ.)

Օրենսդրության վերլուծություն

Դիտարկենք ՀՀ օրենսդրական դաշտում առկա՝ հաշմանդամների իրավունքներին առնչվող ակտերը և անդրադառնանք դրանց կիրառելիությանը մեր իրականության մեջ:

ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածի համաձայն, «բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, *հաշմանդամությունից*¹⁾, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»: Այսպիսով, բարձրագույն իրավաբանական ուժով օժտված Սահմանադրությունում ամրագրված է հաշմանդամի՝ խտրականությունից պաշտպանված լինելու իրավունքը: Այնուամենայնիվ, մեր իրականության մեջ քաղաքացիական, աշխատանքային և օրենքով կարգավորվող այլ հարաբերությունների մասնակից դառնալիս՝ հաշմանդամություն ունեցող անձինք հաճախակի ենթարկվում են բացահայտ կամ քողարկված խտրականության:

Անհրաժեշտ է ստեղծել և կիրառել պատասխանատվության գործուն միջոցներ, որոնք թույլ կտան վերականգնել հաշմանդամների խախտված իրավունքները և կանխել խտրականության հետագա դրսևորումները: Այսպես, օրինակ, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ կետով աշխատանքային օրենսդրության սկզբունքների մեջ նշվում է «աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավահավասարությունը, անկախ նրանց սեռից, ռասայից, ազգությունից, լեզվից, ծագումից, քաղաքացիությունից, սոցիալական դրությունից, դավանանքից, ամուսնական վիճակից և ընտանեկան դրությունից, տարիքից, համոզմունքներից կամ տեսակետներից, կուսակցություններին, արհեստակցական միություններին կամ հասարակական կազմակեր-

պություններին անդամակցելուց, աշխատողի գործնական հատկանիշների հետ չկապված այլ հանգամանքներից»: Աշխատանքային հարաբերությունների մասնակիցները՝ գործատուները և աշխատողները, իրավահավասար են նաև անկախ հաշմանդամությունից, չնայած որ դրա մասին չի նշվում առանձին հանգամանքով, ինչն ավելի նպատակահարմար կլիներ չարաշահումներից խուսափելու համար: Նշենք նաև, որ հաշմանդամությունը չի մտնում աշխատողի գործնական հատկանիշների շրջանակի մեջ, բացառությամբ օրենքով կարգավորվող դեպքերի: Մասնավորապես, համաձայն ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 123 հոդվածի 2-րդ կետի, աշխատանքային պայմանագիրը առանց ժանուցման ենթակա է լուծման, եթե «անձը բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովի եզրակացությանը համապատասխան, չի կարող զբաղեցնել այդ պաշտոնը կամ կատարել այդ աշխատանքը»: Ավելին, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 118 հոդվածը՝ «Մասնագիտական հիվանդություն և աշխատանքային խեղում ստացած, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակ դարձած աշխատողի երաշխիքները», ամրագրում է, որ «մասնագիտական հիվանդության կամ աշխատանքային խեղման պատճառով աշխատունակությունը կորցրած աշխատողի աշխատատեղը և պաշտոնը պահպանվում են մինչև աշխատունակության վերականգնումը կամ հաշմանդամության կարգի որոշումը: Աշխատողի աշխատունակությունը չվերականգնվելու և հաշմանդամության կարգը որոշվելու դեպքում գործատուն սույն գլխով¹⁾ նախատեսված հիմքերով կարող է լուծել աշխատանքային պայմանագիրը»: Հարկ է նշել, որ ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 15-րդ գլխում աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերում բացակայում է հաշմանդամությունը, այսինքն օրենսդրորեն անուղղակիորեն ամրագրված է հաշմանդամի՝ այս ոլորտում չարաշահումներից պաշտպանված լինելու հնարավորությունը:

Հաշմանդամների իրավունքներին առնչվող օրենսդրության առանցքն է «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» օրենքը: Օրենքը, մասնավորապես, սահմանում է երկրում հաշմանդամների սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական ու կազմակերպական հիմունքները, հաշմանդամներին հանրապետության մյուս քաղաքացիների հետ համահավասար հնարավորություններ ապահովելու նպատակով նրանց իրավունքների և ընդունակությունների իրականացման համար առավել բարենպաստ պայման-

¹⁾ Իրավական ակտերի մեջբերումներում շեղատառով ընդգծումը մերն է (հմբ.)

¹⁾ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 15-րդ գլուխ

ների և արտոնությունների տրամադրման պետական քաղաքականության հիմնադրույթները:

Օրենքի 3-րդ հոդվածը ամրագրում է հաշմանդամների և այլ անձանց իրավահավասարության դրույթը, մինչդեռ դրա երրորդ մասով սահմանվում է, որ «հաշմանդամների իրավունքները և պարտականությունները կարող են վերացվել կամ փոփոխվել ՀՀ Սահմանադրությանը և օրենքով սահմանված դեպքերում և կարգով, եթե դրանց իրացումն անհնար է հաշմանդամի կենսագործունեության սահմանափակման պատճառով»: Նման դրույթի առկայությունը կարող է որոշ պաշտոնատար անձանց կողմից չարաշահումների հիմք հանդիսանալ և որպես հետևանք խախտել կամ վիճարկել հաշմանդամների հիմնարար իրավունքները:

Ընդհանուր առմամբ, օրենքը համապատասխանում է միջազգային նորմերին և պահանջներին, սակայն դրանում առկա մի շարք դրույթներ կատարելագործման կարիք ունեն, իսկ օրենքի արդյունավետության մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ այն օբյեկտիվ իրականության մեջ համակողմանիորեն պաշտպանի հաշմանդամների իրավունքներն ու օրինական շահերը: Այսպես, օրինակ՝ օրենքի 16-րդ հոդվածը սահմանում է հաշմանդամների՝ տեղեկություններ ստանալու ազատության ապահովումը: Մասնավորապես, հոդվածի առաջին մասում նշվում է, որ «պետությունն ապահովում է հաշմանդամների տեղեկություններ ստանալու ազատությունը», իսկ նույն հոդվածի վերջին մասով նախատեսվում է, որ «պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հիմնած հեռուստառադիոընկերությունները օրենքով սահմանված եթերաժամանակով ապահովում են մանկական և լրատվական հեռուստահաղորդումների սուրդոթարգմանությամբ հեռարձակումը»: Թվում է, թե այս նորմը պետք է նպաստի լսողության խանգարումներ ունեցող մարդկանց տեղեկատվություն ստանալու իրավունքի իրացմանը, սակայն օրենքում առկա ձևակերպումը խտրականության որոշակի տարրեր է պարունակում, քանի որ խոսքը գնում է բացառապես պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հիմնած հեռուստառադիոընկերությունների մասին, իսկ ներկայումս ՀՀ-ում գործում են բազմաթիվ մասնավոր հեռուստաընկերություններ, որոնց ծրագրերը հիմնականում մնում են անմատչելի խուլ մարդկանց համար:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն, «Հանրային հեռուստառադիոընկերությունը պար-

տավոր է մշակել և իրականացնել այնպիսի ծրագրային քաղաքականություն՝ հեռուստառադիոլսարանին մատուցել այնպիսի հաղորդաշարեր և հաղորդումների տեսակներ, որոնցում հաշվի են առնվում Հայաստանի տարբեր տարածաշրջանների, ազգային փոքրամասնությունների, հասարակության տարբեր շերտերի ու սոցիալական խմբերի շահերը»: Նույն հոդվածի ե) կետում նշվում է, որ «Հանրային հեռուստառադիոընկերությունը պարտավոր է *իր ծրագրերում* ապահովել խուլուհամր հանրության համար հնարավոր տեղեկատվության ստացման մատչելիությունը, օրվա եթերաժամում առնվազն մեկական մանկական և լրատվական հեռուստահաղորդում հեռարձակել սուրդոթարգմանությամբ կամ հայերեն լուսագրով», ինչն ըստ էության «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» օրենքի 16-րդ հոդվածի յուրահատուկ լրացումն է: Գործնականում այս նորմի առկայությունը բավարար չէ հաշմանդամների տեղեկատվության իրավունքի համակողմանի իրացման համար: Նախևառաջ, այս օրենքը ևս չի անդրադառնում մասնավոր հեռուստաընկերություններին: Բացի այդ, բազմաթիվ խուլ մարդկանց և նրանց ներկայացնող կազմակերպությունների հավաստմամբ, լուսագրերը հաճախ չեն օգնում խուլ մարդկանց (հատկապես՝ երեխաներին) լիարժեք կերպով ունկնդրել հեռուստահաղորդումը, ինչի պատճառով նրանցից շատերը գերադասում են սուրդոթարգմանության կիրառումը:

«ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» օրենքի 18-րդ հոդվածը նվիրված է հաշմանդամների զբաղվածության խնդրին: Մասնավորապես, «պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հաշմանդամի աշխատանքային զբաղվածության երաշխիքներն ապահովվում են... ե) հաշմանդամին աշխատանքի տեղավորելու դեպքում գործատուին հաշմանդամին վճարվող աշխատավարձի մասնակի փոխհատուցմամբ»:

Հաշմանդամների զբաղվածության հիմնախնդիրները առավել մանրամասն կարգավորվում են 2005թ. հոկտեմբերի 24-ին ընդունված՝ «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով և 2006թ. հունվարի 17-ի N 26-Ա «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ:

«Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը կարգավորում է

Հայաստանի Հանրապետության բնակչության զբաղվածության իրավական հիմքերը, բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության սկզբունքները, աշխատանքի և զբաղվածության ազատ ընտրության և գործազուրկների սոցիալական պաշտպանության պետական երաշխիքները:

Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետի 4-րդ ենթակետով զբաղվածության աջակցության պետական ծրագրերի մեջ նշվում է «ապահովագրական ստաժ չունեցող կամ մինչև մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող՝ սույն օրենքի 19-րդ հոդվածի երկրորդ մասով նախատեսված հաշմանդամների մասնագիտական ուսուցումը, աշխատանքային ունակությունների վերականգնումը, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար տրամադրվող ֆինանսական աջակցությունը»:

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ «աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամ անձինք իրավունք ունեն նաև անվճար մասնագիտական ուսուցման, աշխատանքային ունակությունների վերականգնման և աշխատանքի տեղավորման, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով ֆինանսական աջակցության՝ սույն օրենքի 39-րդ հոդվածի երկրորդ մասով նախատեսված միջոցների¹⁾ հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով»:

Սույն օրենքը նաև սահմանում է աշխատաշուկայում անմրցունակ խմբերի հասկացությունը և նրանց տրվող լրացուցիչ երաշխիքները: Մասնավորապես, սոցիալական պաշտպանության լրացուցիչ երաշխիքների իրավունք ունեցող, աշխատանքի տեղավորման գործում դժվարություններ կրող և աշխատաշուկայում հավասար մրցակցության անընդունակ աշխատանք փնտրող չզբաղված անձանց խմբերից են նաև հաշմանդամները, որոնց զբաղվածությունն ապահովելու նպատակով զբաղվածության պետական ծառայությունը հանրապետական և տարածքային համաձայնեցման կոմիտեների հետ համատեղ մշակում և իրականացնում է մասնագիտական ուսուցման, ինչպես նաև

¹⁾ «...ֆինանսավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից»

աշխատանքի տեղավորման աջակցության նպատակով աշխատավարձի փոխհատուցման ծրագրեր¹⁾:

Օրենքն անդրադառնում է նաև զբաղվածության բնագավառում սոցիալական երաշխիքներին: Մասնավորապես, հաշմանդամներին երաշխավորվում է կրթաթոշակի վճարում մասնագիտական ուսուցման և աշխատանքային ունակությունների վերականգնման դասընթացներում սովորելու ընթացքում: 2006թ. մարտի 30-ին ՀՀ կառավարության կողմից ընդունված՝ «Գործազուրկների, աշխատաշուկայում անմրցունակ խմբերի և երկարամյա ծառայության ու արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող՝ աշխատանք փնտրող չզբաղված անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 533-Ն որոշմամբ մանրամասնորեն կարգավորվել է նաև հաշմանդամների, որպես աշխատաշուկայում անմրցունակ խմբի, մասնագիտական ուսուցման հետ կապված հարաբերությունները: Այսպես, հաշմանդամների մասնագիտական ուսուցումը և աշխատանքային ունակությունների վերականգնումն իրականացվում են՝ հաշվի առնելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության տարածքային մարմինների կողմից կազմված հաշմանդամի անհատական վերականգնողական ծրագիրը: Իսկ «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ընտրված կազմակերպությունը պետական բյուջեի միջոցներից կամ ՀՀ պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի միջոցներից գործազուրկ և հաշմանդամ ունկնդրին վճարում է կրթաթոշակ ուսուցման ամբողջ ժամանակահատվածի ընթացքում: Մասնագիտական ուսուցման նպատակն է ունկնդրին աջակցելը՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան նոր կարողություններ ու հմտություններ ձեռք բերելու միջոցով հարմար աշխատանքի տեղավորման, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հարցերում:

ՀՀ Սահմանադրության 33.1 հոդվածի համաձայն, «յուրաքանչյուր ոք ունի օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք»: Ի լրացումն այս դրույթի՝ ՀՀ կառավարությունն 2006թ. հունիսի 16-ին ընդունել է «Ձեռնարկատիրական գործունե-

¹⁾ 2006թ. հուլիսի 13-ին ՀՀ կառավարությունն ընդունեց «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման աջակցության նպատակով աշխատավարձի փոխհատուցման կարգը, չափը և պայմանները սահմանելու մասին» N 996-Ն որոշումը

ության պետական գրանցման համար գործազուրկներին և հաշմանդամներին ֆինանսական աջակցություն տրամադրելու կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N 431 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 984-Ն որոշումը: Մասնավորապես, կարգավորվում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Ջբաղվածության պետական ծառայություն» գործակալության զբաղվածության տարածքային կենտրոնների կողմից գործազուրկին և հաշմանդամին ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար անհատույց ֆինանսական աջակցություն տրամադրելու հետ կապված հարաբերությունները: Որոշումը նպատակ է հետապնդում խրախուսելու անձին սեփական գործ սկսելու և նոր աշխատատեղեր ստեղծելու հարցում: Այսպես, «ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար անձին անհատ ձեռնարկատեր կամ առևտրային կազմակերպություն գրանցելու համար տրվում են ֆինանսական միջոցներ»

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական տուրքի վճարման նպատակով անհատ ձեռնարկատեր գրանցվելու համար՝ բազային տուրքի եռապատիկի չափով, իսկ առևտրային կազմակերպություն գրանցելու համար՝ բազային տուրքի 12-ապատիկի չափով.

բ) ֆիրմային անվանումը գրանցելու նպատակով պետական տուրքի վճարման համար՝ բազային տուրքի 6-ապատիկի չափով.

գ) կնիք ձեռք բերելու համար՝ կնիք պատրաստող պետական մասնագիտացված կազմակերպության կողմից սահմանված գների սանդղակի նվազագույն գնի չափով»:

Աշխատանքային խեղման կամ մասնագիտական հիվանդության հետևանքով հաշմանդամ ճանաչված մարդկանց վճարվում է կենսաթոշակ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Օրենքը նախատեսում է նաև հաշմանդամության հիմնական կենսաթոշակի կամ հաշմանդամության սոցիալական կենսաթոշակի վճարում, որի չափը կազմում է՝

- առաջին խմբի համար՝ հիմնական կենսաթոշակի 120 տոկոսը,
- երկրորդ խմբի համար՝ հիմնական կենսաթոշակի 100 տոկոսը,
- երրորդ խմբի համար՝ հիմնական կենսաթոշակի 80 տոկոսը:

Անկախ կյանք վարելու հնարավորություն ունենալու և հասարակության լիիրավ անդամ լինելու համար անձը պետք է անարգել կերպով օգտվի հանրային նշանակության հաստատություններից: Այդ իսկ պատճառով խիստ անհրաժեշտ է ապահովել ֆիզիկական միջավայրի

մատչելիությունը տեղաշարժման դժվարություններ ունեցող մարդկանց համար: «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» օրենքի 22-րդ հոդվածում նշվում են բնակավայրերի նախագծման և կառուցապատման, բնակելի շրջանների ձևավորման, նախագծային լուծումների մշակման, շենքերի, կառուցվածքների, ներառյալ օդանավակայանների և երկաթուղային կայարանների շինարարության և վերակառուցման, ինչպես նաև տրանսպորտային միջոցների, այդ թվում անհատական, կապի և տեղեկատվության միջոցների մշակման ու արտադրության անթույլատրելիությունը այն դեպքում, երբ դրանք հաշմանդամների մատչելիության և օգտագործման համար հարմարեցված չեն: Ի լրացումն այս նորմի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի հոդված 10-ի գ) կետով նշվում է, որ «Հայաստանի Հանրապետության կառավարությունը քաղաքաշինության բնագավառում՝ ապահովում է հաշմանդամների համար բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, տրանսպորտային ենթակառուցվածքների օբյեկտներից անարգել օգտվելու՝ օրենքից բխող պահանջների իրականացումը»: Օրենքի 16-րդ հոդվածը տալիս է քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի համակարգի սահմանումը, համաձայն որի այն «քաղաքաշինական գործունեության պետական կարգավորման միջոց է, որը սահմանում է հուսալիության, շրջակա միջավայրի պահպանության, հակահրդեհային, սանիտարահիգիենիկ, *հաշմանդամների տեղաշարժման մատչելիությունն ապահովող* և այլ անհրաժեշտ նորմեր»:

Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերը կազմում են բնագավառի իրավական ակտերի համակարգի բաղկացուցիչ մասը և հիմք են ծառայում փորձաքննության, քաղաքաշինական գործունեության վերահսկողության, վիճելի հարցերի լուծման համար:

2002 թվականի փետրվարի 2-ին ՀՀ կառավարությունն ընդունել է «Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության կարգը հաստատելու մասին» N 96 որոշումը: Կարգը սահմանում է ՀՀ տարածքում քաղաքաշինական ծրագրային և ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի փորձաքննության իրականացման ընթացակարգերին ներկայացվող հիմնական պահանջներն ու կարգավորում է փորձաքննություն իրականացնող ու քաղաքաշինական գործունեության այլ սուբյեկտների փոխհարաբերությունները: Քաղաքաշինական փաստաթղթերը, մինչև դրանց համաձայնեցումը և հաստատումը, ենթակա են փորձաքննության: Իրականացվում են փորձաքննության հետևյալ տեսակները՝

- հատուկ համալիր փորձաքննություն
- համալիր փորձաքննություն, որին ենթակա են քաղաքաշինական այն նախագծային փաստաթղթերը, որոնցով պահանջվում է բնության և շրջակա միջավայրի պաշտպանության, արտակարգ իրավիճակների կանխարգելման, արդյունաբերական անվտանգության, ընդերքի արդյունավետ օգտագործման, *հաշմանդամների ու բնակչության սակավաշարժուն խմբերի պաշտպանության* և այլ անհրաժեշտ միջոցառումների իրականացումը:

Քաղաքաշինական փաստաթղթերի դիտարկման արդյունքների հիման վրա կազմվում է փորձագիտական եզրակացություն:

Նման դրույթի առկայությունը կոչված է երաշխավորելու, որ վերահսկողությունը շենքերի և շինությունների մատչելիության նկատմամբ իրականացվի սկսած դրանց նախագծման փուլից, ինչը հնարավորություն է տալիս առավել արդյունավետորեն վերահսկել քաղաքաշինական գործընթացները և ժամանակին վերացնել խախտումները:

Ուշագրավ է, որ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006թ. նոյեմբերի 10-ի N 253-Ն հրամանով հաստատվել են «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերը, որոնք ուժի մեջ են մտել 2007թ. հունվարի 25-ից:

Վերոնշյալ նորմերի առկայությունը ընդլայնում է քաղաքաշինական պետական տեսչության իրական հնարավորությունը վերահսկել նաև շենքերի և շինությունների մատչելիությունը «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26 հոդվածով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում, այն է՝ «վերահսկել քաղաքաշինական գործունեության բնագավառում իրավական ակտերի, քաղաքաշինական փաստաթղթերի, նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարումը, քաղաքաշինության բնագավառում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ տալ պարտադիր կատարման հրահանգներ և ցուցումներ, հետևել դրանց իրականացմանը. օրենքով սահմանված դեպքերում և կարգով նշանակել վարչական տույժեր, ինչպես նաև իրավասու մարմիններ ներկայացնել հաղորդումներ՝ քաղաքաշինության բնագավառում իրավախախտումներ թույլ տված անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու համար»: Ինչպես կարելի է նկատել, այստեղ անդրադարձ է կատարված նաև վարչական տույժերի նշանակման հնարավորությանը, սակայն իրականում ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենս-

գրքում բացակայում են մատչելիության սահմանափակումն առանձին կետով արգելող դրույթները¹⁾:

Մատչելիության խնդրին առնչվող իրավական ակտերից հատկանշական է նաև ՀՀ կառավարության «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին» N 392-Ն որոշումը: Այդ փաստաթղթով կանոնակարգվում են «քաղաքաշինության բնագավառի համապատասխան ծրագրերի շրջանակներում ներդրումային գործընթացն ապահովող կառուցապատողների և քաղաքաշինության գործունեության այլ սուբյեկտների փոխհարաբերությունները՝ հաշմանդամների և բնակչության տեղաշարժման սահմանափակումներով (այսուհետ՝ սակավաշարժուն) խմբերի կենսագործունեության, մասնավորապես՝ տեղաշարժման համար մատչելի միջավայր ապահովելու նպատակով»: Սահմանվում են նաև Հայաստանի Հանրապետության տարածքում հաշմանդամների սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքի օբյեկտների հասանելիության ապահովմանը ներկայացվող հիմնական պահանջները՝ քաղաքաշինական փաստաթղթերի մշակման, համաձայնեցման և հաստատման գործընթացն իրականացնելիս: Հատկապես ուշադրության են արժանի հետևյալ դրույթները՝

«... 7. Փողոցի երթևեկելի և հետիոտն գոտիները, ստորգետնյա և վերգետնյա անցումները, շենքերին ու շինություններին հարող տարածքները, հասարակական հանգստի վայրերը, սպորտային և մանկական խաղահրապարակները պետք է կահավորված լինեն անհրաժեշտ թեքահարթակներով և հատուկ հարմարանքներով, ինչպես նաև լուսային, ձայնային և այլ նախագգուշացման միջոցներով (փողոցի երթևեկելի մասի և մայրերի վերակառուցումը կարող է իրականացվել աստիճանաբար՝ *ճանապարհային ծածկույթի հերթական վերանորոգման ընթացքում*):

8. Նոր կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքերը պետք է հարմարեցված լինեն հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար՝ համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքով սահմանված պահանջների՝ ապահովելով նշված խմբերի համար անհրաժեշտ միջոցառումների իրականացումը: Մաս-

¹⁾ Խոսքը միայն շենքի, շինության ամրության, կայունության կամ հուսալիության մասին է

նավորապես՝ շենքերի մուտքերը պետք է կահավորված լինեն թեքահարթակներով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ամբարձիչներով, վերելակների դռները շենքի բոլոր հարկերում պետք է ունենան լուսային կամ ծայնային ազդանշաններ: Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի բնակության համար հարմարեցված բնակարանների քանակը որոշվում է ճարտարապետահատակագծային առաջադրանքով:

Վերակառուցվող բազմաբնակարան բնակելի շենքերը պետք է հնարավորինս հարմարեցվեն հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի կարիքներին՝ ապահովելով բնակվելու համար անհրաժեշտ միջոցառումների իրականացումը:

9. Նոր կառուցվող հասարակական նշանակության՝ գիտական, կրթական, առողջապահության, սոցիալական պաշտպանության, սպորտի, հանգստի և ժամանցի համար նախատեսված շենքերն ու շինությունները, հյուրանոցները, մշակույթի, կրոնական, առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման, վարչական, ֆինանսաբանկային համակարգի, ինչպես նաև տրանսպորտային նշանակության շենքերն ու շինությունները՝ երկաթուղային կայարանները, օդանավակայանները, ավտոկայարանները, ավտոկայանները, ավտոկայանատեղերը, ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների երթուղիների կանգառները պետք է մատչելի լինեն հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար՝ ապահովելով նրանց անարգել տեղաշարժը, հասարակական և սոցիալական ծառայություններից օգտվելու հնարավորությունը՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքով սահմանված պահանջների համաձայն, և հագեցված լինեն անհրաժեշտ սարքավորումներով ու հարմարանքներով:

Վերակառուցվող հասարակական նշանակության շենքերն ու շինությունները պետք է հնարավորինս հարմարեցվեն հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի կարիքներին՝ ապահովելով նրանց ազատ տեղաշարժման համար անհրաժեշտ հնարավոր պայմաններ:

Շենքերն ամբողջությամբ հարմարեցման ենթակա չլինելու դեպքում անհրաժեշտ է հասարակական և սոցիալական ծառայությունները կենտրոնացնել հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար մատչելի գոտիներում:

10. Մարզական, համերգային, դիտահանդեսային նշանակության (թանգարաններ, ցուցասրահներ, պատկերասրահներ, ակումբներ և

մշակույթի տներ, թատրոններ և կինոթատրոններ, մարզահամերգային համալիրներ, կրկեսներ և այլն) շենքերի և կառույցների դահլիճներում, լսարաններում հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար նախատեսված տեղերը կազմակերպվում են ցուցադրական, տեղեկատվական, ուսումնական և այլ ծրագրերի և նյութերի լիարժեք ընկալումն ապահովող գոտիներում:

Ուսումնական հաստատություններում հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար նախատեսվում են հատուկ սարքավորված տեղեր»:

Հաշվի առնելով, որ այժմ Երևանում արագ տեմպերով իրականացվում են շինարարական աշխատանքներ, հուսանք, որ դրանց արդյունքում ի հայտ եկող շենքերն ու շինությունները կկառուցվեն մատչելիության պահանջների պահպանմամբ, ինչը կնպաստի, որ մայրաքաղաքում բնակվող հաշմանդամները կարողանան վարել առավել անկախ կյանք:

Հասարակության լիարժեք անդամ դառնալու համար անձը պետք է նաև կրթություն ստանա, և դրա մատչելիությունը հավասար կարևորություն ունի հասարակության յուրաքանչյուր անդամի համար: «Կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածում նշվում են կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները, որոնցից տվյալ կոնտեքստում կարևորություն են ներկայացնում հետևյալները՝ կրթության մարդասիրական բնույթը, համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության, ազգային արժանապատվության, հայրենասիրության, օրինականության և բնապահպանական աշխարհայացքի դաստիարակությունը, ինչպես նաև 2-րդ կետում նշված «կրթության մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստականության աստիճանին՝ պետական պարտադիր նվազագույնի ապահովմամբ: Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասում նշվում է, որ «Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության իրավունք՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից կամ այլ հանգամանքներից»: Ակնհայտ է, որ այստեղ բացակայում է անկախ հաշմանդամությունից կրթության իրավունքի ապահովումը: Ըստ երևույթի, այն ենթադրվում է այլ հանգամանքներում, սակայն ճիշտ կլիներ, որ նշվեր առանձին

կետով: Հոդվածի 2-րդ մասում նշվում է, որ «պետությունը անհրաժեշտ պայմաններ է ստեղծում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթություն ստանալու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով»: Ավելին, 19-րդ հոդվածով նախատեսվում է, որ «պետությունն ստեղծում է հատուկ հաստատություններ (այդ թվում՝ երկարօրյա և գիշերօթիկ)՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը կազմակերպելու նպատակով»: Հատուկ հաստատությունների տիպերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: 2-րդ կետով նշվում է, որ «կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը ծնողների ընտրությամբ կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ հաստատություններում՝ հատուկ ծրագրերով»: Բացի դրանից, 49-րդ հոդվածի 5-րդ կետը ամրագրում է, որ «կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար հանրակրթական հաստատությունների ֆինանսավորումն իրականացվում է բարձրացված չափաքանակներով»:

2005 թվականի մայիսի 25-ին ընդունվել է «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը, որը, մասնավորապես, կարգավորում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց՝ իրենց ընդունակություններին և կարողություններին համապատասխան կրթություն ստանալու իրավական, կազմակերպական և ֆինանսական հիմքերը, ինչպես նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության կազմակերպման բնագավառում հարաբերությունների մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները:

Համաձայն օրենքի 4-րդ հոդվածի, «եթե կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձը սահմանված կարգով ձանաչված է հաշմանդամ, ապա կրթության առանձնահատուկ պայմանների անհրաժեշտությունը ներառվում է հաշմանդամի անհատական վերականգնման ծրագրում՝ հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան»:

Օրենքի 5-րդ հոդվածում հանգամանորեն նշվում են նաև բոլոր նրանք, ովքեր օգտվում են պետական աջակցությունից հատուկ կրթական հաստատություններում և ներառական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում:

«ա) խոսքի ծանր խանգարումներ, հնչյունահնչույթային և խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաները:

բ) լսողության խանգարում՝ չլսող (խուլ), թույլ լսող և լսողության կորուստ ունեցող երեխաները:

գ) տեսողության խանգարում՝ կույր, թույլ տեսնող, ուշ կուրացած, շլուջուն ունեցող երեխաները:

դ) մտավոր հետամնացություն ունեցող երեխաները:

ե) հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաները:

զ) հոգեբանական զարգացման խնդիրներ՝ ուսումնական ունակությունների զարգացման յուրահատուկ խանգարումներ ունեցող երեխաները:

է) վարքային և հուզականային ոլորտի խանգարումներ ունեցող երեխաները»:

Օրենքի 6-րդ հոդվածը նվիրված է կրթության առանձնահատուկ պայմաններ ունեցող անձանց իրավունքներին: Մասնավորապես, «կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձինք իրավունք ունեն կրթական ծրագրերին, իրենց զարգացման առանձնահատկություններին և տարիքին համապատասխան ստանալու՝

ա) նախադպրոցական, տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ ընդհանուր կրթություն՝ պետական և համայնքային հանրակրթական ուսումնական հաստատություններում՝ անվճար հիմունքներով:

բ) հատուկ կրթություն՝ հատուկ և ներառական կրթություն իրականացնող հանրակրթական պետական ուսումնական հաստատություններում՝ անվճար հիմունքներով:

գ) նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն և հետբուհական մասնագիտական, հիմնական և լրացուցիչ կրթություն՝ համապատասխան ուսումնական հաստատություններում՝ պետպատվերի շրջանակում կամ օրենքով սահմանված այլ արտոնյալ հիմունքներով:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձինք ուսումնառության ընթացքում իրավունք ունեն օգտվելու հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների՝ օրենսդրությամբ սահմանված իրավունքներից և պարտականություններից, ինչպես նաև *հաշմանդամության դեպքում* օգտվելու օրենքով սահմանված արտոնություններից»:

Օրենքն անդրադառնում է նաև առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող այն անձանց կրթությանը, ովքեր առողջական վիճակի պատճառով չեն կարող ժամանակավորապես կամ մշտապես հաճախել ուսումնական հաստատություններ: Այս դեպքում նրանց համար կազմակերպվում է տնային ուսուցում՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած կարգի:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց տնային ուսուցման իրավունք վերապահող հիվանդությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների զարգացման սոցիալական հարմարվածությունը և նրանց հասարակական ներառումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ուսումնական հաստատություններում կազմակերպվում է ներառական կրթություն:

Ավելացնենք նաև, որ հողված 18-ում անդրադարձ է կատարված կրթության առանձնատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության բնագավառում կրթության պետական կառավարման լիազոր մարմնի իրավասություններին, մասնավորապես, «ընդունել և իրականացնել քաղաքացիների առողջության պահպանմանը, *հաշմանդամության կանխարգելմանը*, կենսագործունեության սահմանափակումներով անձանց սոցիալական հարմարեցմանն ուղղված համատեղ ծրագրեր ու միջոցառումներ»:

Ակնհայտ է, որ կրթության ոլորտում գործող իրավական ակտերը առաջադեմ են և բխում են երեխաների (այդ թվում՝ հաշմանդամների) շահերից: Միևնույն ժամանակ, ուսումնական հաստատությունների շենքերի ֆիզիկական անմատչելիության հետևանքով հանրակրթական դպրոցում և հատկապես բուհում սովորելը մնում է անհասանելի երազանք բազմաթիվ հաշմանդամ (հատկապես՝ սայլակ օգտագործող) երեխաների համար: Նույնիսկ ներառական կրթություն կիրառող դպրոցների շենքերում բացակայում են հարմարեցված սանհանգույցները, դասասենյակների մեծ մասը ևս դժվարամատչելի է սայլակ օգտագործող երեխաներին:

Ամփոփելով ՀՀ-ում հաշմանդամների իրավունքների պաշտպանությանն ուղղված օրենսդրական դաշտի վերլուծությունը՝ նշենք, որ մեր կարծիքով այն հիմնականում համապատասխանում է միջազգային նորմերին, բխում է հաշմանդամների իրավունքներից և օրինական շահերից: Միևնույն ժամանակ, իրավական ակտերում առկա առաջա-

դիմական դրույթները հաճախ մնում են թղթի վրա՝ չունենալով զգալի ազդեցություն հաշմանդամների կյանքի որակի վրա: Նույնը կարելի է ասել Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015 թվականների ռազմավարության մասին, որն ուղղված է հաշմանդամների համար հասարակական կյանքի բոլոր բնագավառներում մատչելիության, հավասար իրավունքների և հնարավորությունների, հաշմանդամ երեխաների կրթության ապահովմանը, հաշմանդամների զբաղվածության խթանմանը, նպատակ է հետապնդում կիրառել հաշմանդամների հիմնահարցերի լուծմանն ուղղված պետական և ոչ պետական մարմինների միջև սոցիալական գործընկերության սկզբունքները, ինչպես նաև ապահովել հաշմանդամության և հաշմանդամների հիմնահարցերի վերաբերյալ հանրային կրթությունը և իրազեկությունը: Ռազմավարությունը հանգամանորեն նշում է կյանքի տարբեր ոլորտներում առկա խնդիրները, նախանշված նպատակները և դրանց հասնելու ուղիները: Միևնույն ժամանակ, այդ ուղիները իրացման գործում մեխանիզմներ են պահանջում, որոնք միշտ չէ, որ առկա են տվյալ ռազմավարությունում: Ավելին, ռազմավարության իրացման վերջնաժամկետը 2015 թվականն է, մինչդեռ ճիշտ կլիներ թերևս կարևորագույն միջոցառումներից յուրաքանչյուրի համար նշել մեկ կամ երկու տարվա վերջնաժամկետ՝ կախված դրա իրացման բարդությունից: Բացի դրանից, անհրաժեշտ է նշել այն մարմինները, որոնք պատասխանատու են գործողությունների պատշաճ կատարման համար, և պատասխանատվության միջոցները՝ նախատեսվող միջոցառումները ոչ պատշաճ կատարելու կամ ձախողելու համար: Մեր համոզմամբ, սա հնարավորություն կտա առավել հետևողական լինել և արդյունավետորեն հասնել նպատակներից յուրաքանչյուրին:

Որպես հաշմանդամության ազգային ռազմավարության և օրենսդրության կատարելագործման հիմք՝ օգտակար կլինի կենսագործել Եվրոպայի Խորհրդի թիվ Rec(2006)5 Հանձնարարականում տեղ գտած 2006-2015թթ. Հաշմանդամության ոլորտում գործողությունների ծրագիրը: Այն պարունակում է կյանքի տարբեր բնագավառներին վերաբերող իրավական և սոցիալական միջոցառումների համալիր: Ելնելով այն հանգամանքից, որ Հայաստանի Հանրապետությունը Եվրոպայի Խորհրդի անդամ է, ակնհայտորեն անհրաժեշտ է իրագործել Հանձնարարականի հիմնական դրույթները և դրան համապատասխան կատարելագործել հաշմանդամությանն առնչվող ազգային օրենսդրությունն և քաղաքականությունը՝ հաշվի առնելով ազգային առանձնահատկությունները:

Եվրոպայի Խորհրդի թիվ Rec(2006)5 Հանձնարարական (համառոտ բովանդակություն)

Հաշմանդամության ոլորտում գործողությունների ծրագրի կոնցեպցիայի հիմքում ընկած է այնպիսի հիմնարար մոտեցում, համաձայն որի հաշմանդամներին և նրանց ներկայացուցիչներին պետք է հնարավորություն ընձեռվի մասնակցել իրենց կյանքին անմիջականորեն վերաբերող որոշումների կայացման գործընթացին:

Անդամ պետությունները պետք է շարունակեն աշխատել մարդու իրավունքների պաշտպանության և խտրականությունն արգելող սկզբունքի շրջանակներում, որպեսզի հնարավոր լինի ապահովել հաշմանդամների անկախությունը, ազատ ընտրության և կյանքի պատշաճ մակարդակի իրավունքները, ինչպես նաև բարձրացնել հասարակության կողմից հաշմանդամության ընկալումը որպես մարդու գոյության բազմազանության տեսակ: Անդամ պետությունները պարտավոր են ներմուծել իրականացվող քաղաքականության և կիրառվող օրենսդրության մեջ համապատասխան սկզբունքներ և ձեռնամուխ լինել այնպիսի միջոցառումների իրականացմանը, որոնք հանգամանորեն շարադրված են Եվրոպայի Խորհրդի հաշմանդամության ոլորտում գործողությունների ծրագրում: Այն իր հերթին նպատակ է հետապնդում ապահովել հաշմանդամների իրավունքների իրացումը և հասարակական կյանքին նրանց լիարժեք մասնակցությունը:

Բացի վերը նշվածից, այս միջոցառումները ուղղված են հաշմանդամների կյանքի որակի բարձրացմանը Եվրոպայում 2006-2015 թվականներին, ինչն արտահայտված է Հանձնարարականին կցված հավելվածներում: Անդամ պետությունները պետք է ապահովեն գործողությունների ծրագրի իրականացումը նաև այն ոլորտներում, որոնք անմիջականորեն չեն գտնվում պետական հանրային մարմինների պատասխանատվության ներքո, բայց որոնց նկատմամբ այդ մարմինները, այնուամենայնիվ, կարող են էական դեր խաղալ՝ համագործակցելով մասնավոր սեկտորի ու քաղաքացիական հասարակության հետ: Այս գործընթացներում անպայմանորեն պետք է ներառվեն հաշմանդամները:

րից բաղկացած և/կամ նրանց հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունները:

Հասարակությունը պարտավորություն է կրում իր բոլոր անդամների նկատմամբ, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է հնարավորինս նվազեցնել հաշմանդամության բացասական ազդեցությունները: Այս նպատակին հասնելու համար պետք է իրականացնել որոշակի միջոցառումներ ազգային մակարդակով:

Գործողությունների ծրագրի հիմնարար սկզբունքներն են՝

- խտրականության արգելում
- հնարավորությունների հավասարություն
- բոլոր հաշմանդամների լիարժեք մասնակցություն հասարակության կյանքին
- հաշմանդամության ընկալումը որպես մարդկային բազմազանության տեսակ
- արժանապատվություն և անհատական անկախություն
- կանանց և տղամարդկանց հավասարություն
- հաշմանդամների մասնակցություն իրենց կյանքին վերաբերող որոշումների կայացմանը ինչպես անհատապես, այնպես էլ իրենց ներկայացուցչական մարմինների միջոցով:

Ծրագրի հիմքն է կազմում հետևյալ բնագավառներին վերաբերող գործողությունների համալիր՝

1. Քաղաքական և հասարակական կյանք
2. Մշակութային կյանք
3. Տեղեկատվություն և կապ
4. Կրթություն
5. Զբաղվածություն և մասնագիտական ուսուցում
6. Միջավայրի ֆիզիկական մատչելիություն
7. Տրանսպորտ
8. Արտելակերպ համայնքներում
9. Առողջապահություն
10. Վերականգնում
11. Սոցիալական պաշտպանություն
12. Իրավական պաշտպանություն
13. Պաշտպանություն չարաշահումներից և բռնությունից
14. Ուսումնասիրություններ
15. Իրազեկության մակարդակի բարձրացում

1. Քաղաքական և հասարակական կյանք

Բոլոր քաղաքացիների մասնակցությունը քաղաքական և հասարակական կյանքին էական դեր է կատարում ժողովրդավարական հասարակության զարգացման գործընթացում: Հասարակության հիմքում ընկած է նրա անդամների բազմազանությունը և նրանց գիտելիքներից ու փորձից օգտվելու հավասար հնարավորությունը: Այդ իսկ պատճառով կարևոր է հաշմանդամների ընտրելու և ընտրվելու իրավունքի իրացման ապահովումը: Պետք է ջանքեր գործադրվեն ստեղծելու համար այնպիսի միջավայր, որտեղ հաշմանդամները հնարավորություն ունենան մասնակցել քաղաքականությանը տեղական, տարածաշրջանային, ազգային և միջազգային մակարդակներում:

Հատկանշական է, որ կին և երիտասարդ հաշմանդամները կազմում են ներկայացուցչական լիազորություններով օժտված մարդկանց փոքր տոկոս: Կարևոր է խրախուսել նրանց մասնակցությունը քաղաքական գործընթացներին:

Անդամ պետությունները պետք է ձեռնամուխ լինեն հետևյալ գործողությունների կատարմանը՝

1. ապահովել ընտրական ընթացակարգի մատչելիությունը, ինչը հնարավորություն կընձեռի հաշմանդամներին իրականացնել իրենց իրավունքները, և անհրաժեշտության դեպքում դիմել օգնության.
2. պաշտպանել հաշմանդամների քվեարկության գաղտնիության իրավունքը և հնարավորության դեպքում թույլ տալ օգտվել իրենց ցանկությամբ կողմնակի անձի օգնությունից.
3. երաշխավորել, որ ոչ ոք զրկված չէ ընտրելու և ընտրվելու իրավունքից հաշմանդամության հիմքով.
4. երաշխավորել ընտրությունների հետ կապված տեղեկությունների մատչելիությունը բոլոր հնարավոր ձևաչափերով, որոնք չեն առաջացնում ընկալման դժվարություն.
5. խրախուսել քաղաքական կուսակցություններին և այլ քաղաքացիական կազմակերպություններին ներկայացնել տեղեկատվությունը և կազմակերպել նախընտրական հանդիպումները մատչելի կերպով.
6. խրախուսել հաշմանդամներին, հատկապես կին և երիտասարդ հաշմանդամներին ստեղծել ներկայացուցչական կազմակերպություններ կամ անդամագրվել դրանց տեղական,

մարզային և ազգային մակարդակներում քաղաքականության վրա ներազդելու նպատակով.

7. խրախուսել հաշմանդամների և նրանց կազմակերպությունների հետ խորհրդակցությունները այլոց հետ հավասար հիմունքներով, հատկապես որոշումների կայացման գործընթացներում:

2. Մշակութային կյանք

Հասարակության կյանքին լիարժեքորեն մասնակցելու հաշմանդամների իրավունքը անմիջականորեն կախված է մշակութային կյանքին մասնակցելու՝ նրանց ընձեռված հնարավորությունից: Հաշմանդամները պետք է փոխհարաբերվեն հասարակության այլ անդամների հետ: Հաշմանդամություն ունեցող անձինք իրավունք ունեն մասնակցել մշակութային անցուդարձին, ժամանցին, սպորտին և զբոսաշրջիկությանը:

Նշված նպատակին հասնելը դյուրին չէ: Բազմաթիվ միջոցներ կարող են ձեռնարկվել, սակայն վերջիվերջո ակնհայտ է դառնում հատուկ օրենսդրության անհրաժեշտությունը: Այն պետք է արտահայտի «ողջամիտ կարգավորման» կոնցեպցիան, հատկապես պատմական շինությունների և հուշարձանների, նաև մասնավոր շինությունների մատչելիության ապահովման կոնտեքստում: Բացի դրանից, այս խնդիրները պետք է լուսաբանվեն ՋԼՄ-ներով:

Անդամ պետությունները պետք է ձեռնամուխ լինեն հետևյալ գործողությունների կատարմանը՝

1. խրախուսել հաստատություններին և համապատասխան մարմիններին տեղական, տարածաշրջանային, ազգային և միջազգային մակարդակներում իրատարակել հաշմանդամների համար մատչելի գրականություն և այլ մշակութատեղեկատվական նյութեր, օգտագործելով էլեկտրոնային տեխնոլոգիաները հնարավորինս հեշտ և ըմբռնելի տարբերակով.
2. խրախուսել ՀԿ-ներին և մասնավոր հիմնարկներին, հաստատություններին և համապատասխան մարմիններին ներառել հաշմանդամներին մշակութային, ժամանցային, սպորտային, հոգևոր և ինտելեկտուալ միջոցառումներում.

3. ապահովել հաշմանդամների համար հաղորդումների, կինոնկարների, թատերական ներկայացումների և մշակութային այլ միջոցառումների մատչելիությունը՝ լայնորեն կիրառելով լուսագրերը, ժեստերի լեզուն և այլ օժանդակող միջոցները.
4. ապահովել ազգային ռադիո- և հեռուստատեսության աշխատակազմում հաշմանդամների ներգրավվածությունը.
5. խրախուսել հաստատություններին, որոնց գործունեությունը կապված է մշակութային, սպորտային մրցումների, ժամանցի և զբոսաշրջիկության հետ, պարբերաբար անցկացնել հաշմանդամության վերաբերյալ իրազեկության դասընթացներ.
6. հնարավորություն ընձեռել հաշմանդամներին մասնակցել մշակութային, սպորտային, ժամանցային և զբոսաշրջիկության հետ կապված միջոցառումներին՝ մատչելի դարձնելով դրանք.
7. իրականացնել նաև հետևյալ քայլերը՝
 - ապահովել ինտելեկտուալ սեփականությունը պաշտպանող օրենսդրության խտրականությունից զերծ մնալը՝ հաշմանդամների համար մշակութային նյութերի մատչելիության ապահովման կոնտեքստում և միջազգային իրավունքի նորմերին համապատասխան.
 - պաշտպանել հաշմանդամ ստեղծագործողների իրավունքները.
8. խրախուսել հաշմանդամներին մասնակցել բոլոր միջոցառումներին, անկախ այն հանգամանքից, արդյոք վերջիններս հատուկ նախատեսված են հաշմանդամների համար, թե ոչ.
9. երաշխավորել հաշմանդամ երեխաների ներգրավվածությունը մարզական և մշակութային միջոցառումներում հաշվի առնելով դրանց էական դերը սոցիալական հմտությունների ձեռքբերման գործընթացում:

3. Տեղեկատվություն և կապ

Տեղեկատվության և կապի մատչելիությունը հասարակության կյանքին մասնակցության հիմնական ասպեկտներից մեկն է: Եթե հաշմանդամները ակտիվորեն իրացնում են իրենց իրավունքները, կայացնում են որոշումներ, ապա անհրաժեշտ է ապահովել նրանց համար

տեղեկատվության մատչելիություն կապի համարժեք միջոցներով: Ցավոք, բավականին մեծ թվով հաշմանդամների համար կապը և տեղեկատվությունը շարունակում են մնալ անմատչելի:

Տեղեկատվական և հաղորդակցական բնագավառներում ընթացող ինտենսիվ բարեփոխումները հանգեցրել են հաղորդակցման և տեղեկատվության փոխանակման միջոցների աննախադեպ զարգացման: Դրանք ներառում են ինտերնետը, տեսահեռախոսները և այլ միջոցները: Կարևոր է ապահովել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու հնարավորությունը բոլոր մարդկանց, հատկապես հաշմանդամների համար:

Պետական մարմինները պարտավոր են երաշխավորել տեղեկատվության մատչելիությունը բոլոր հնարավոր ձևաչափերով, որոնք բխում են տարբեր խմբերին պատկանող հաշմանդամների կարիքներից: Նրանք պետք է օրինակ ծառայեն մասնավոր սեկտորում գործունեություն ծավալող ընկերությունների համար և խրախուսեն նման պրակտիկայի կիրառումը:

Անդամ պետությունները պետք է ձեռնամուխ լինեն հետևյալ գործողությունների կատարմանը՝

1. ապահովել հաշմանդամների համար պաշտոնական տեղեկատվության մատչելիությունը՝ հաշվի առնելով նրանց առանձնահատուկ կարիքները (օրինակ՝ Բրայլի համակարգի, աուդիո-նյութերի կամ դյուրընթեռնելի տարբերակով տպված նյութերի կիրառում).
2. ձեռնարկել դասընթացներ և այլ միջոցառումներ՝ խրախուսելու համար հաշմանդամների կողմից տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը.
3. ապահովել նյութի էլեկտրոնային տարբերակի մատչելիությունը գոյություն ունեցող ստանդարտներին համապատասխան.
4. ճանաչել հաշմանդամների իրավունքը, որ տարաբնույթ ծառայություններ տրամադրող կազմակերպությունները (ներառյալ՝ փաստաբանական գրասենյակները) պետք է հնարավորություն ունենան օգտագործելու ժեստերի լեզուն, Բրայլի տառատեսակը և կապի այլընտրանքային միջոցները, և անհրաժեշտության դեպքում կիրառեն դրանք պաշտոնական հաղորդակցման ընթացքում: Հանդիպումների և կոնֆերանսների ժամանակ հաշմանդամներին պետք է ընձեռնվի իրենց դիրքորոշումն արտահայտելու հնարավորություն.

5. դարձնել կապի միջոցները առավել մատչելի նոր տեխնոլոգիաների կիրառմամբ.
6. երաշխավորել հանրային մարմինների կողմից տրամադրվող տեղեկատվության և հաղորդակցման միջոցների (ներառյալ վեբ-կայքերի) մատչելիությունը հաշմանդամների համար՝ միջազգային նորմերին համապատասխան.
7. խրախուսել բոլոր մասնավոր կազմակերպություններին տրամադրել հաշմանդամների համար մատչելի ձևաչափով տեղեկատվություն և հաղորդակցման միջոցներ.
8. խրախուսել կապի և տեղեկատվության նոր տեխնոլոգիաների զարգացումը, արտադրությունը և տարածումը.
9. ունիվերսալ դիզայնի սկզբունքներին համապատասխան՝ զարգացնել կապը և տեղեկատվական համակարգի բնագավառում կիրառվող տեխնոլոգիաները:

4. Կրթություն

Կրթության մատչելիությունը և հավասար հնարավորությունները հիմնարար նշանակություն ունեն հաշմանդամների անկախությունը և սոցիալական կյանքին մասնակցությունն ապահովելու համար: Կրթությունը պետք է ներառի կյանքի բոլոր ժամանակաշրջանները (նախադպրոցական, տարրական, միջնակարգ, մասնագիտական, բարձրագույն), ինչպես նաև ընձեռի հաշմանդամին ուսուցման հնարավորություն ողջ կյանքի ընթացքում:

Հաշմանդամների կրթության կազմակերպումը սովորական (ոչ հատուկ) ուսումնական հաստատություններում դրական ազդեցություն ունի ոչ-հաշմանդամ մարդկանց իրազեկության մակարդակի բարձրացման վրա՝ խթանելով մարդկային գոյության բազմազանության ճիշտ ընկալման ձևավորումը ամբողջ հասարակությունում:

Անդամ պետությունները պետք է ձեռնամուխ լինեն հետևյալ գործողությունների կատարմանը՝

1. մշակել համապատասխան օրենսդրություն և քաղաքականություն, որոնք ուղղված կլինեն հաշմանդամ երեխաների, երիտասարդների և միջին տարիքի անձանց պաշտպանությանը խտրականությունից կրթության բոլոր մակարդակներում: Անհրաժեշտության դեպքում, խորհրդակցել հաշմանդամների, նրանց ծնողների և խնամակալների, ինչպես նաև

- կամավորական և այլ մասնագիտացված կազմակերպությունների հետ.
2. աջակցել միասնական (ընդհանուր և հատուկ կրթության) կրթական համակարգի զարգացմանը, ինչը կխթանի հաշմանդամ երեխաների, երիտասարդների և միջին տարիքի անձանց ինտեգրումը հասարակության մեջ.
3. ապահովել հաշմանդամ երեխաների, երիտասարդների կամ միջին տարիքի մարդկանց կրթական առանձնահատուկ կարիքների վաղ հայտնաբերումը՝ սահմանելու համար նրանց կրթական պայմանները և կրթության պլանավորումը.
4. վերահսկել կրթական անհատական ծրագրերի կատարումը և կիրառել համակարգված մոտեցում կրթության և հետագա զբաղվածության նկատմամբ.
5. ապահովել հաշմանդամներին, ներառյալ հաշմանդամ երեխաներին պահանջվող աջակցությամբ և հեշտացնել նրանց արդյունավետ կրթությունը: Այն դեպքում, երբ ընդհանուր կրթական ծրագիրը չի համապատասխանում հաշմանդամների կրթական կարիքներին, անդամ պետությունները պետք է երաշխավորեն այլընտրանքային կրթական հնարավորությունները: Բոլոր հատուկ և ընդհանուր կրթական ծրագրերը պետք է ուղղված լինեն ընդհանուր կրթական համակարգին անցնելուն և արտահայտեն նույն նպատակները և ստանդարտները.
6. խրախուսել մասնագետների և աշխատակազմի համար վերապատրաստումների անցկացում կրթության բոլոր մակարդակներում, հիմնական շեշտը դնելով հաշմանդամության ճիշտ ընկալման և դրա վերաբերյալ իրազեկության մակարդակի բարձրացման վրա, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում խրախուսել համապատասխան կրթական մեթոդների և նյութերի օգտագործումը՝ աջակցելու համար հաշմանդամ աշակերտներին և ուսանողներին.
7. ապահովել ընդհանուր կրթական համակարգի բոլոր կրթական նյութերի մատչելիությունը հաշմանդամների համար.
8. ներառել դպրոցական ուսումնական ծրագրերում այնպիսի առարկաներ, որոնք վերաբերում են հաշմանդամներին, հաշվի առնելով վերջիններիս իրավահավասարությունն այլ անձանց հետ.

9. ապահովել հաշմանդամությանն առնչվող իրազեկության ծրագրերի առկայությունը դպրոցական և բուհական կրթական ծրագրերում.
10. ձեռնարկել քայլեր ապահովելու համար կրթական վայրերի մատչելիությունը հաշմանդամների համար, ներառյալ անձնական աջակցության և ողջամիտ հարմարանքների առկայությունը նրանց կարիքներին համապատասխան.
11. ապահովել հաշմանդամ երեխաների ծնողների ակտիվ մասնակցությունը իրենց երեխաների կրթական ծրագրերի մշակման գործընթացում.
12. ապահովել ոչ ֆորմալ կրթության մատչելիությունը հաշմանդամների համար, ինչը թույլ կտա նրանց զարգացնել այնպիսի հմտություններ, որոնք հնարավոր չէր լինի զարգացնել ֆորմալ կրթության պայմաններում:

5. Ձբաղվածություն և մասնագիտական ուսուցում

Ձբաղվածությունը բոլոր աշխատունակ քաղաքացիների սոցիալական ներգրավվածության և տնտեսական անկախության հիմքն է: Եթե համեմատենք հաշմանդամների և ոչ-հաշմանդամների զբաղվածության մակարդակները, ապա կարելի է նկատել, որ հաշմանդամների զբաղվածության աստիճանը բավականին ցածր է: Ձբաղվածության մակարդակի բարձրացմանն ուղղված բազմաբնույթ քաղաքականությունները պետք է միտված լինեն վերացնելու աշխատաշուկայում հաշմանդամների մասնակցությանը խոչընդոտող գործոնները՝ նրանց աշխատանքային ներուժին համապատասխան: Իրավիճակի բարելավումը դրական ազդեցություն կունենա ոչ միայն հաշմանդամների, այլ նաև գործատուների և ամբողջ հասարակության վրա:

Մասնագիտական ուսուցումը և աջակցությունը կարևոր դեր են խաղում անձի մասնագիտական կողմնորոշման հարցում: Հույժ կարևոր է ապահովել մասնագիտական ուսուցողական ծրագրերի և դասընթացների մատչելիությունը հաշմանդամների համար, ինչը կնպաստի նրանց ներուժի բացահայտմանը և իրագործմանը:

Անդամ պետությունները պետք է ձեռնամուխ լինեն հետևյալ գործողությունների կատարմանը՝

1. զբաղվածության հիմնական ռազմավարությունում հատկապես ուշադրություն դարձնել հաշմանդամների զբաղվածության խնդիրներին.
2. ապահովել հաշմանդամների համար օբյեկտիվ անհատական գնահատման մատչելիություն, որը թույլ կտա՝
 - սահմանել նրանց պոտենցիալ զբաղվածության տարբերակները.
 - զբաղվածության խնդիրը դիտարկել ոչ թե հաշմանդամության, այլ կոնկրետ աշխատանքի պահանջներին վերաբերող կարողությունների տեսանկյունից.
 - նախագծել վերապատրաստման կամ մասնագիտացման ուսուցման ծրագրերը.
 - օգնել հաշմանդամներին գտնել համապատասխան աշխատանք.
3. ապահովել վերապատրաստման դասընթացների մատչելիությունը հաշմանդամների համար՝ անհրաժեշտության դեպքում տրամադրելով նաև ողջամիտ հարմարանքներ.
4. ապահովել խտրականությունից պաշտպանություն զբաղվածության բոլոր (ներառյալ ընտրության և աշխատանքի ընդունման) փուլերում.
5. խրախուսել գործատուներին ընդունել աշխատանքի հաշմանդամներին.
6. երաշխավորել զբաղվածության ընդհանուր համակարգերի մատչելիությունը.
7. երաշխավորել հաշմանդամների համար հատուկ ստեղծված հիմնարկների առկայությունը այն դեպքերում, երբ ազատ աշխատաշուկայում անհնար է հաշմանդամների զբաղվածության խնդրի լուծումը.
8. խթանել հաշմանդամների առաջխաղացումը հատուկ հիմնարկներում աշխատելուց բաց աշխատաշուկայում աշխատանքի ընդունվելու ուղղությամբ.
9. վերացնել այն մեխանիզմները, որոնց առկայության դեպքում հաշմանդամը զրկվում է նպաստից կամ կենսաթոշակից աշխատանքի ընդունվելու պարագայում. խրախուսել հաշմանդամներին հնարավորության դեպքում աշխատել.
10. հաշվի առնել հաշմանդամ կանանց կարիքները (ներառյալ երեխայի խնամքի համար նախատեսված ժամանակահատվածը)

հավասար հնարավորությունների քաղաքականության մշակման ժամանակ.

11. ապահովել աշխատանքի պայմանների և արհեստակցական միություններին անդամակցելու՝ հաշմանդամ և ոչ-հաշմանդամ աշխատողների հավասար իրավունքները.
12. ձեռնարկել արդյունավետ միջոցներ խթանելու համար հաշմանդամների զբաղվածությունը:

6. Միջավայրի ֆիզիկական մատչելիություն

Գործողությունների ծրագրի հիմնական նպատակն է՝ ստեղծել հասարակություն բոլորի համար: Մատչելի շրջակա միջավայրը ունի հիմնարար դեր առօրյա կյանքին հաշմանդամների մասնակցության ապահովման գործում: Գոյություն ունեցող խոչընդոտները թույլ չեն տալիս հաշմանդամներին իրացնել իրենց այդ իրավունքը: Մատչելի ֆիզիկական միջավայրի ստեղծումը օգտակար է ոչ միայն հաշմանդամների, անկախ հաշմանդամության տեսակից, այլ նաև հասարակության բոլոր անդամների համար: Սա պահանջում է առկա խոչընդոտների գիտակցում և դրանք վերացնելու պարտավորություն՝ մի շարք միջոցառումների ձեռնարկմամբ:

Անդամ պետությունները պետք է ձեռնամուխ լինեն հետևյալ գործողությունների կատարմանը՝

1. ապահովել ոլորտին առնչվող բոլոր ռազմավարությունների մեջ մատչելի ֆիզիկական միջավայրի ստեղծման նպատակի առկայությունը.
2. զարգացնել սկզբունքներ և կիրառական ձեռնարկներ, անհրաժեշտության դեպքում նաև օրենսդրություն՝ դարձնելու համար հասարակական կառույցները բոլոր իմաստներով մատչելի հաշմանդամների համար, հաշվի առնելով պատմական կառույցների առանձնահատկությունները.
3. երաշխավորել համալսարաններում «Շինարարություն» և «Կառուցապատում» դասընթացային ծրագրերի մեջ ունիվերսալ դիզայնի սկզբունքների առկայությունը և դրա մատուցումը հետագա ուսման ընթացքում.
4. աջակցել օժանդակող սարքավորումների և տեխնոլոգիական նորույթների օգտագործման գաղափարի ներմուծմանը՝ մատչելի դարձնելով ֆիզիկական միջավայրը, և հնարավորություն

տալ հաշմանդամներին հավասար հիմունքների վրա մասնակցել հասարակության կյանքին: Նմանատիպ մեթոդները պետք է կիրառվեն ինչպես նոր կառուցվող շենքերի և շինությունների, այնպես էլ արդեն գոյություն ունեցողների նկատմամբ.

5. աջակցել ունիվերսալ դիզայնի կոնցեպցիայի օգտագործումը խթանող կենտրոնների ստեղծմանը և զարգացմանը.
6. ապահովել պատշաճ ուշադրություն հաշմանդամների անվտանգությանը էվակուացման համար նախատեսված ելքերի նախագծման ժամանակ.
7. ապահովել հաշմանդամներին ուղեկցող կենդանիների անարգել մուտքը շինություններ և հասարակական վայրեր:

7. Տրանսպորտ

Տրանսպորտի մատչելիությունն ապահովող քաղաքականության զարգացումը և իրականացումը բոլոր մակարդակներում կարող է նպաստել բազմաթիվ հաշմանդամների կյանքի որակի բարձրացմանը, հնարավորություն ընձեռել նրանց ապրել անկախ կյանքով և ակտիվ մասնակցություն ունենալ համայնքի սոցիալական և մշակութային կյանքում, ինչպես նաև զբաղվածության բնագավառում:

Հաշմանդամները կարող են օգտվել հասարակական տրանսպորտից միայն ամբողջ տրանսպորտային համակարգի մատչելիության պայմաններում:

Անդամ պետությունները պետք է ձեռնամուխ լինեն հետևյալ գործողությունների կատարմանը՝

1. հաշվի առնել միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացված՝ տրանսպորտային միջոցների մատչելիությանն առնչվող հանձնարարականները և ղեկավար սկզբունքները, մասնավորապես ստանդարտների, ռազմավարությունների մշակման, երբեմն նաև օրենսդրության բարեփոխման գործընթացներում.
2. վերահսկել տրանսպորտի մատչելիությունն ապահովող ռազմավարության իրացումը.
3. երաշխավորել նշված բնագավառում աշխատողների՝ հաշմանդամության վերաբերյալ իրազեկվածության բարձր մակարդակը.

4. խթանել ազգային ղեկավար սկզբունքների ներառումը և օգտագործումը հանրային և մասնավոր տրանսպորտային օպերատորների կողմից.
5. համագործակցել և խորհրդակցել պետական տարբեր մարմինների և հաշմանդամներին ներկայացնող կազմակերպությունների հետ տրանսպորտի մատչելիությունն ապահովող ռազմավարության մշակման ժամանակ.
6. խրախուսել մասնավոր տրանսպորտային օպերատորներին ապահովել մատչելի ծառայություններ.
7. երաշխավորել հասարակական տրանսպորտի վերաբերյալ տեղեկատվության մատչելիություն հնարավորինս բազմազան ձևաչափերով և կապի տարբեր միջոցներով.
8. խրախուսել նորարարական ծրագրերի ստեղծումը, որոնք աջակցում են հասարակական տրանսպորտի օգտագործման հետ կապված դժվարություններ ունեցող հաշմանդամներին սեփական փոխադրամիջոցներն օգտագործելու հարցում.
9. երաշխավորել հաշմանդամներին ուղեկցող կենդանիների համար հասարակական տրանսպորտ մտնելու հնարավորությունը.
10. ապահովել մեքենայի հատուկ կայանատեղիների առկայությունը տեղաշարժման դժվարություններ ունեցող հաշմանդամների համար.
11. հաշվի առնել հաշմանդամների կարիքները ուղևորների իրավունքների վերաբերյալ հիմնարար փաստաթղթերի մշակման ընթացքում.
12. օրենսդրորեն ամրագրել տրանսպորտից օգտվելու ժամանակ խտրականությունից պաշտպանող մեխանիզմներ.
13. բացառել վթարային իրավիճակների համար նախատեսված այնպիսի միջոցների կիրառումը, որոնք ավելորդ անհավասարություն են ստեղծում հաշմանդամների և ոչ-հաշմանդամների մեջ:

8. Ապրելակերպ համայնքում

Հաշմանդամները իրավունք ունեն ապրել հնարավորինս անկախ և ինքնուրույն, ինչը ներառում է ապրելակերպի և բնակության վայրի ազատ ընտրության նրանց իրավունքը: Ինքնուրույն կյանքի հնարա-

վորությունները նախևառաջ պետք է ստեղծվեն համայնքում, որպեսզի հաշմանդամը կարողանա ապրել ընտանիքում: Խնդրին առնչվող քաղաքականությունները պետք է լինեն ձկուն՝ հնարավորություն ընծեռելով հաշմանդամներին ապրել իրենց ընտանիքների հետ, միևնույն ժամանակ հաշվի առնելով հատուկ աջակցության կարիք ունեցող մարդկանց առկայությունը: Լրիվ անկախ կյանքը չի կարող հասու լինել բոլոր անհատներին: Բացառիկ դեպքերում, պետությունը պետք է խրախուսի խնամքի կազմակերպումը փոքր և որակավորված հաստատություններում՝ որպես այլընտրանք ծերանոցներին և նմանատիպ հաստատություններին:

Անկախ կյանքի միջոցների նախագծման գործընթացը պետք է ներառի հաշմանդամներին և նրանց շահերը ներկայացնող կազմակերպություններին:

Անդամ պետությունները պետք է ձեռնամուխ լինեն հետևյալ գործողությունների կատարմանը՝

1. երաշխավորել հաշմանդամների նկատմամբ համակարգված մոտեցման ցուցաբերում, ինչը թույլ կտա նրանց ապրել համայնքներում և կբարձրացնի նրանց կյանքի որակը.
2. զարգացնել և կիրառել այն քաղաքականությունները, որոնք հնարավորություն կընծեռեն հաշմանդամներին բնակվել հարմարեցված բնակարանում իրենց տեղական համայնքում.
3. աջակցել պաշտոնական և ոչ պաշտոնական կերպով տրամադրվող օգնությունը, որը թույլ է տալիս հաշմանդամներին ապրել տանը.
4. ճանաչել հաշմանդամին տանը խնամող անձի կարգավիճակը.
5. հաշվի առնել այն ընտանիքների կարիքները, որոնք ունեն հաշմանդամ երեխաներ կամ առավել խնամք պահանջող հաշմանդամներ, տրամադրելով նրանց տեղեկատվություն, ուսուցում և օգնություն.
6. ապահովել համայնքահեն բարձրորակ ծառայությունների մատուցումը, որոնք հնարավոր կդարձնեն հաստատությունների փոխարեն բնակվել տանը.
7. ապահովել խորհրդատվական ծառայությունից օգտվելու հաշմանդամների իրավունքը.
8. խթանել այնպիսի մոտեցումների կիրառումը, որոնց շնորհիվ հաշմանդամները կկարողանան ընտրել իրենց օգնող անձանց.
9. ստեղծել լրացուցիչ ծառայություններ մատուցող (օրինակ՝ ցերեկային) կենտրոններ:

9. Առողջապահություն

Հաշմանդամները ունեն հասարակության այլ անդամների հետ հավասար իրավունք օգտվել որակյալ բժշկական օգնությունից: Որոշ դեպքերում հաշմանդամներին անհրաժեշտ են հատուկ կամ նորարարական բժշկական ծառայություններ, որոնք կբարձրացնեն նրանց կյանքի որակը: Հաշմանդամները և նրանց ներկայացուցիչները պետք է մասնակցեն իրենց անհատական խնամքի ծրագրի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացին:

Անդամ պետությունների առողջապահության բնագավառում ներգրավված բոլոր աշխատողները պետք է ընկալեն անձի հաշմանդամությունը սոցիալական, այլ ոչ թե բացառապես բժշկական մոդելի տեսանկյունից:

Անդամ պետությունները պետք է ձեռնամուխ լինեն հետևյալ գործողությունների կատարմանը՝

1. ապահովել հաշմանդամների պաշտպանվածությունը խտրականությունից առողջապահական համակարգի ծառայություններից օգտվելու ընթացքում.
2. ապահովել յուրաքանչյուր հաշմանդամի՝ իր առողջապահական ծրագրի կամ բուժման գնահատմանը և իրականացմանը մասնակցելու հնարավորությունը.
3. ապահովել առողջապահական համակարգի ծառայությունների մատչելիությունը և պատշաճ որակը հաշմանդամների համար.
4. ապահովել հաշմանդամ կանանց հավասար հնարավորությունը օգտվել առողջապահական համակարգի ծառայություններից, ներառյալ մինչծննդաբերական, գինեկոլոգիական և ընտանիքի պլանավորման վերաբերյալ պատշաճ խորհրդատվություն ստանալու իրավունքը.
5. հաշվի առնել սեռային հատկանիշով պայմանավորված տարբերությունները հաշմանդամների կողմից առողջապահական համակարգի ծառայություններից օգտվելու ժամանակ.
6. ապահովել ողջամիտ քայլերի ձեռնարկում անհատի առողջական խնամքի կարիքների կամ ծառայությունների ձևաչափերը ընկալելի դարձնելու հաշմանդամի համար.
7. ապահովել հաշմանդամության մասին հայտնումը, անկախ դրա առաջացումից մինչծննդական կամ հետծննդյան ժամանակ, հիվանդության կամ դժբախտ պատահարի արդյունքում՝

անձի և նրա ընտանիքի անդամների նկատմամբ հարգանքի և հաշմանդամության վերաբերյալ պատշաճ տեղեկատվության տրամադրման պայմաններում.

8. ապահովել առողջապահական կրթության և հանրային առողջապահական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը և խորհրդատվություն ստանալու հնարավորությունը հաշմանդամների համար.
9. պատրաստել այնպիսի մասնագետներ, որոնց իրազեկության աստիճանը հաշմանդամության վերաբերյալ թույլ կտա նրանց պատշաճ կերպով սպասարկել տարբեր կարիքներ ունեցող հաշմանդամներին.
10. ձեռնարկել հաշմանդամության կանխարգելման և վաղ հայտնաբերման միջոցները:

10. Վերականգնում

Վերականգնման բազմակողմանի ծրագրերը պետք է ներառեն սպասարկման այնպիսի բազմազան և լրացուցիչ միջոցներ, ծառայություններ, պայմաններ և մեթոդներ, որոնք կարող են զգալիորեն նպաստել հաշմանդամների ֆիզիկական և հոգեբանական անկախության ձեռքբերմանը:

Անդամ պետությունները պետք է ձեռնամուխ լինեն հետևյալ գործողությունների կատարմանը՝

1. ձևակերպել, իրականացնել և զարգացնել վերականգնման ազգային քաղաքականության ծրագրերը և երաշխավորել դրանց անընդհատ կատարելագործում.
2. երաշխավորել հաշմանդամների, նրանց ընտանիքների և ներկայացուցիչների մասնակցությունը վերականգնման ծրագրերի գնահատմանը, ստեղծմանը և իրականացմանը.
3. ապահովել վերականգնման ծրագրի մատչելիությունը, նաև հաշմանդամի կարիքներին համապատասխանությունը, մասնավորապես, հաշմանդամի կամ նրա ներկայացուցչի համաձայնության պայմաններում.
4. որտեղ հնարավոր է, օգտագործել ընդհանուր (հաշմանդամների համար հատուկ չնախատեսված) հաստատությունները և սարքավորումները, միևնույն ժամանակ ապահովելով մասնագիտացված վերականգնողական կենտրոնների լրիվ տեխ-

- նիկական ապահովվածությունը պատշաճ մակարդակի ծառայություններ մատուցելու համար.
5. բարելավել վերականգնողական ծառայությունների մակարդակը՝ կիրառելով անհատական մոտեցում.
 6. համագործակցել տվյալ բնագավառի հետ առնչություն ունեցող բոլոր (մասնավորապես, առողջապահության, կրթության, սոցիալական և զբաղվածության) ոլորտների հետ.
 7. ապահովել հաշմանդամ երեխաների համար կրթական գործընթացի ժամանակ բոլոր անհրաժեշտ ռեսուրսների մատչելիությունը՝ հնարավորություն տալով նրանց բացահայտել իրենց ողջ ներուժը.
 8. խթանել աշխատանքի ընթացքում հաշմանդամ դարձած անձանց՝ կարճ ժամանակահատվածում աշխատանքի վերադառնալու հնարավորությունը.
 9. մշակել վերականգնման անհատական ծրագրեր.
 10. ապահովել օժանդակող սարքավորումների առկայությունը և հասանելիությունը դրանց կարիքն ունեցող հաշմանդամներին:

11. Սոցիալական պաշտպանություն

Սոցիալական պաշտպանությունը ներառում է սոցիալական ապահովություն, օգնություն և ծառայություններ, որոնք կարևորագույն նշանակություն ունեն այն անձանց համար, ովքեր անմիջականորեն օգտվում են դրանցից: Սակայն միևնույն ժամանակ պետք է նշել, որ կան շատ դեպքեր, երբ հաշմանդամները չեն կարողանում օգտվել սոցիալական պաշտպանության համակարգից դրա անմատչելիության կամ ոչ բավարար պայմանների պատճառով:

Անդամ պետությունները պետք է ձեռնամուխ լինեն հետևյալ գործողությունների կատարմանը՝

1. երաշխավորել սոցիալական պաշտպանության միջոցների և ակտիվ զբաղվածության քաղաքականության միջև հավասարակշռության ապահովումը՝ նպաստներից և օգնությունից հաշմանդամների պասիվ կախվածությունը բացառելու համար.
2. ապահովել սոցիալական ապահովության և աջակցության տրամադրումը անհատի կարիքներին համապատասխան.

3. ապահովել սոցիալական պաշտպանության ծրագրերի մատչելիությունը բոլոր հաշմանդամների և նրանց ներկայացուցիչների համար.
4. ապահովել բոլոր հանրային սոցիալական ծառայությունների կողմից հաշմանդամների և նրանց ընտանիքների առանձնահատուկ կարիքների ընկալումը.
5. ապահովել սոցիալական ծառայություններ մատուցող մարմինների, հանրային և մասնավոր կազմակերպությունների միջև համագործակցությունը և դրա հետագա զարգացումը՝ հաշվի առնելով հաշմանդամների հատուկ կարիքները.
6. խորհրդակցել տվյալ բնագավառում գործող մարմինների, այդ թվում՝ հաշմանդամների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների հետ սոցիալական պաշտպանության քաղաքականության պլանավորման և իրացման ընթացքում.
7. երաշխավորել սոցիալական պաշտպանության վերաբերյալ տեղեկատվության արդյունավետ տարածում դրանից օգտվող հաշմանդամների համար, հիմնական շեշտը դնելով այն հաշմանդամների վրա, ովքեր գտնվում են սոցիալական ռիսկային գոտում.
8. ապահովել սոցիալական ներգրավվածությանն ուղղված և աղքատության դեմ պայքարող ծրագրերի շրջանակում հաշմանդամների հատուկ կարիքների բավարարումը:

12. Իրավական պաշտպանություն

Հաշմանդամություն ունեցող անձինք և ոչ-հաշմանդամները հավասար են օրենքի առջև: Հաշմանդամների իրավունակությունը պետք է ապահովվի անդամ պետությունների կողմից մշակված օրենսդրությամբ:

Բացի այդ, հաշմանդամները ունեն լրացուցիչ երաշխիքների իրավունք, որպեսզի կարողանան օգտվել իրենց իրավունքներից ողջ ծավալով և հասարակության այլ անդամների հետ հավասար հիմունքներով մասնակցեն հասարակական գործընթացներին:

Հաշմանդամների իրավունքների նկատմամբ հատուկ ուշադրությունը և այլ անձանց հետ նրանց հավասարությունը հաստատված են

ազգային և միջազգային մակարդակներում անդամ պետությունների կողմից ձեռնարկված միջոցառումների կատարմամբ:

Խտրականությունն արգելող սկզբունքը պետական քաղաքականության հիմքն է, որն երաշխավորում է հավասար հնարավորություններ հաշմանդամների և ոչ-հաշմանդամների համար:

Իրավական համակարգի մատչելիությունը ժողովրդավարական հասարակության հիմնարար իրավունքն է, բայց հաշմանդամները հաճախ հանդիպում են խոչընդոտների, այդ թվում՝ ֆիզիկական անմատչելիության հետ կապված արգելքների: Այս խնդրի լուծման համար պահանջվում է միջոցառումների համակարգ, ներառյալ իրավական համակարգի աշխատողների՝ հաշմանդամության ճիշտ ըմբռնումը և իրազեկության մակարդակի բարձրացումը:

Անդամ պետությունները պետք է ձեռնամուխ լինեն հետևյալ գործողությունների կատարմանը՝

1. ապահովել խտրականությունից պաշտպանական մեխանիզմների գոյությունը, ձեռնարկելով նաև իրավական միջոցներ.
2. վերացնել հաշմանդամների նկատմամբ օրենսդրորեն ձևակերպված կանխակալ դրույթները.
3. կազմակերպել մարդու իրավունքների և հաշմանդամության ընկալման վերաբերյալ դասընթացներ իրավական համակարգի աշխատակիցների, պետական պաշտոնյաների, դատական և բժշկական աշխատակազմերի համար.
4. խրախուսել հաշմանդամների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ոչ պետական կազմակերպություններին.
5. ապահովել հաշմանդամների՝ այլոց հետ հավասար հնարավորությունը դիմել մատչելի դատական համակարգի պաշտպանությանը՝ պաշտպանելով նրանց տեղեկատվություն ստանալու և հաղորդակցվելու իրավունքը.
6. աջակցել այն հաշմանդամներին, ովքեր դժվարություններ ունեն իրենց իրավունակության իրացման ժամանակ և տրամադրել նրանց անհրաժեշտ աջակցություն պատշաճ մակարդակով.
7. ձեռնարկել համապատասխան միջոցներ, որպեսզի հաշմանդամները չգրկվեն ազատությունից, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.
8. ձեռնարկել համապատասխան միջոցներ, որոնք ապահովում են հաշմանդամների իրավունքը տիրապետել, տնօրինել և օգ-

տագործել իրենց սեփականությունը այլ անձանց հետ հավասար հիմունքներով.

9. ապահովել, որ ոչ մի հաշմանդամ չներգրավվի բժշկական փորձարկումներում առանց իր համաձայնության:

13. Պաշտպանություն չարաշահումներից և բռնությունից

Ցանկացած մարդու նկատմամբ չարաշահումները և բռնությունը անթույլատրելի են, և հասարակությունը պարտավորված է ապահովել անհատների, հատկապես՝ առավել խոցելի խմբերի պաշտպանությունը նմանատիպ չարաշահումներից և բռնությունից:

Վիճակագրական տվյալներին համաձայն, հաշմանդամները, հատկապես հաշմանդամ կանայք, ավելի հաճախ են ենթարկվում բռնությունների և խոչտանգումների, քան հասարակության այլ խմբերը: Նման բռնությունների նրանք կարող են հանդիպել տարբեր տիպի հաստատություններում, այդ թվում խնամքի կենտրոններում, ինչպես նաև ընտանիքում: Այն կարող է ունենալ տարբեր դրսևորումներ, օրինակ՝ բռնի գործողություններ, հոգեկան կամ ֆիզիկական ճնշում:

Քանի դեռ պետությունը չի կարող երաշխավորել յուրաքանչյուրի պաշտպանությունը բռնությունից, այն պետք է ձեռնարկի բոլոր հնարավոր միջոցները հաշմանդամների համար պաշտպանական մեխանիզմներ սահմանելու և իրացնելու համար:

Կանխարգելումը կարող է իրականացվել բազմաթիվ ձևերով, մասնավորապես, ծանոթացնելով անհատներին իրենց իրավունքներին, հատկապես բռնությունից պաշտպանվելու իրավունքին:

Բռնությունից կամ չարաշահումներից տուժած հաշմանդամների համար պետք է մատչելի լինեն բոլոր առկա աջակցող միջոցները: Նրանք պետք է հնարավորություն ունենան դիմել վստահելի և ռեալ օգնություն տրամադրելու ունակ հաստատություն: Նման կենտրոնները պետք է համալրված լինեն մասնագիտացված աշխատակազմով, որը կարող է տարբերակել բռնության դեպքերը և ցուցաբերել համապատասխան օգնություն:

Անդամ պետությունները պետք է ձեռնամուխ լինեն հետևյալ գործողությունների կատարմանը՝

1. մշակված քաղաքականության և օրենսդրության միջոցով ապահովել հաշմանդամների՝ բռնություններից և չարաշահումներից պաշտպանված լինելու իրավունքի երաշխիքները.

2. կազմակերպել և իրականացնել հաշմանդամների համար բռնությունից և չարաշահումներից պաշտպանվելու վերաբերյալ դասընթացներ.
3. զարգացնել բռնության դեպքերի բացահայտմանն ուղղված միջոցառումների համակարգը և ապահովել համապատասխան գործողությունների կատարումը բռնության սուբյեկտների նկատմամբ, ներառյալ մասնագիտացված և համարժեք օգնության տրամադրումը հոգեբանական խնդիրների դեպքում.
4. ապահովել բռնությունից (այդ թվում՝ ընտանեկան) տուժողների հնարավորությունը օգտվել աջակցող կենտրոնների կողմից տրամադրվող ծառայություններից.
5. կանխարգելել և պայքարել բռնության, չարաշահումների և խոշտանգումների դեմ, բարձրացնելով իրազեկվածությունը, շահագրգիռ կողմերի միջև անցկացնել քննարկումներ և նպաստել նրանց համագործակցությանը.
6. բռնության ենթարկված հաշմանդամներին (հատկապես՝ հաշմանդամ կանանց) և նրանց ընտանիքներին ընձեռել հնարավորություն օգտվել համապատասխան տեղեկատվությունից և ծառայություններից.
7. երաշխավորել հոգեբուժարաններում, սոցիալական խնամքի կենտրոններում, մանկատներում և այլ նմանատիպ հաստատություններում բռնության ենթարկված հաշմանդամներին օգնություն ցուցաբերելու ծրագրերի առկայությունը.
8. երաշխավորել հաշմանդամների խնամքի և այլ հաստատությունների անձնակազմի մասնագիտական պատրաստվածությունը.
9. ուստիկանության և դատական մարմինների համար կազմակերպել հատուկ դասընթացներ, որոնք ուղղված կլինեն նրանց՝ հաշմանդամներից պատշաճ կերպով վկայությունների ստացմանը և բռնության դեպքերի նկատմամբ լուրջ մոտեցման ցուցաբերմանը.
10. ապահովել հաշմանդամներին բռնությունից խուսափելու միջոցների, այն ճանաչելու և նման դեպքերի մասին հայտնելու վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությամբ.
11. կիրառել արդյունավետ իրավական, վարչական, դատական կամ այլ միջոցառումների համալիր, ներառյալ խիստ պատժամիջոցների սահմանումը, և հաշվի առնել քաղաքացիական հասարակության անկախ դիտարկումները՝ կանխելու համար

հոգեկան կամ ֆիզիկական բռնությունը, չարաշահումները կամ խոշտանգումները, հաշմանդամների շահագործումը կամ նրանց առևանգումը:

14. Ուսումնասիրություններ

Բազմակողմանի ուսումնասիրությունների անցկացումը, վիճակագրական տվյալների հավաքագրումը և վերլուծությունը կարևոր են ճիշտ քաղաքականություն ձևավորելու համար: Նման վստահելի տեղեկությունները թույլ են տալիս նախանշել ծագող խնդիրները, նաև օգնում են գտնել դրանց լուծումները և հետագայում հասնել դրական արդյունքների: Բացի դրանից, կարևոր է նախանշել լավագույն մեթոդները և հետևել հասարակությունում ընթացող փոփոխություններին: Հաշմանդամների վերաբերյալ տվյալների պակասը հանդիսանում է ռազմավարության զարգացման խոչընդոտներից մեկը ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում:

Անդամ պետությունները պետք է ձեռնամուխ լինեն հետևյալ գործողությունների կատարմանը՝

1. զարգացնել վիճակագրական և տեղեկատվական քաղաքականությունները՝ հիմնվելով մարդու իրավունքների և հաշմանդամության սոցիալական մոդելի վրա, և քննարկել արդեն իսկ գոյություն ունեցող տվյալների համակարգի և ազգային ռազմավարությունների արդյունավետությունը.
2. ապահովել ստացված տեղեկատվության գաղտնիությունը, միևնույն ժամանակ օգտագործելով այն ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում.
3. ապահովել, որպեսզի ցանկացած հետազոտություն պարունակի տվյալներ հաշմանդամների մասնակցության մասին սույն Գործողությունների ծրագրում նշված բոլոր ոլորտներում.
4. անցկացնել այնպիսի հետազոտություններ, որոնք կարտահայտեն հաշմանդամ կանանց վերաբերյալ տվյալներ.
5. կիրառել համակարգված մոտեցում՝ համաձայնեցնելով ընդհանուր սահմանումները, որոնք հանգեցնում են ազգային և միջազգային տվյալների բազաների գնահատմանը և վերլուծությանը.

6. իրականացնել հաշմանդամների՝ հասարակությանն ինտեգրման և արդյունավետ վերականգնման վերաբերյալ հետազոտություններ.
7. իրականացնել դեմոգրաֆիական և բնակչության ծերացման գործընթացների՝ հաշմանդամների կյանքի որակի վրա ազդեցության ուսումնասիրություններ.
8. ներգրավվել հաշմանդամների ներկայացուցիչներին տվյալների բազայի կազմման և հետազոտությունների ռազմավարության մշակման գործընթացներում.
9. կիրառել գիտական հետազոտությունների արդյունքները նոր տեխնոլոգիաների, օժանդակող սարքավորումների և սարքերի ստեղծման ժամանակ, ինչը կնպաստի հաշմանդամների անկախ կյանքին և հասարակության անցուդարձին մասնակցելուն.
10. հետազոտությունների ընթացքում հաշվի առնել ունիվերսալ դիզայնի սկզբունքները.
11. իրականացնել դրական փորձի և տեղեկատվության փոխանակում՝ սերտորեն համագործակցելով տվյալ բնագավառում գործունեություն իրականացնող կազմակերպությունների հետ:

15. Իրազեկության մակարդակի բարձրացում

Հաշմանդամներից շատերի համոզմամբ, լիովին ինտեգրվելու մեծագույն խոչընդոտներից մեկը հասարակության վերաբերմունքն է նրանց հանդեպ:

Հաշմանդամները մինչ օրս հանդիպում են անընդունելի վերաբերմունքի՝ հիմնված կանխակալության, վախի և նրանց կարողությունների նկատմամբ անհավատության վրա: Նման վերաբերմունքը կարող է փոխվել բնակչության իրազեկության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների կազմակերպման շնորհիվ:

Վերջին տարիներին անդամ պետություններից շատերը ընդունել են խտրականությունն արգելող օրենսդրությունը: Այս բարեփոխումներն օգնում են հաշմանդամներին իրենց բնակության վայրերում, համայնքներում, սակայն միայն դրանք բավարար չեն:

Անդամ պետությունները պետք է համագործակցեն ՋԼՄ-ների հետ, որոնք կարող են ներազդել բնակչության վրա՝ փոխելով մարդկանց վերաբերմունքը հաշմանդամների հանդեպ:

Հաշմանդամների մասին պետք է խոսել գովազդներում, հեռուստատեսությամբ, ռադիոյով և մամուլում, որի արդյունքում կփոխվի հաշմանդամության հասկացության ընկալման պարադիգմը, և միայն այդ ժամանակ կարելի է հասնել հասարակության վերաբերմունքի արմատական փոփոխության: Հասարակությունը պետք է գիտակցի, որ հաշմանդամներն օժտված են մարդու նույն իրավունքներով, ինչ և մնացած անձինք, և միայն հասարակությունում գոյություն ունեցող թաքնված կամ ակնհայտ խոչընդոտներն են, որ թույլ չեն տալիս նրանց օգտվել այդ իրավունքներից: Այս խոչընդոտների վերացումը դրական կլինի ոչ միայն հաշմանդամների, այլ նաև հասարակության այլ անդամների համար: Ավելին, պետք է հասարակությանը իրազեկել հաշմանդամների բոլոր ձեռքբերումների մասին:

Անդամ պետությունները պետք է ձեռնամուխ լինեն հետևյալ գործողությունների կատարմանը՝

1. տեղադրել պետության կողմից պատվիրվող գովազդներում և այլ ձևերով հրապարակել հաշմանդամությունը ներկայացնող պատկերներ.
2. խրախուսել բոլոր ՋԼՄ-ներին ներկայացնել հաշմանդամներին որպես հասարակության լիարժեք անդամների.
3. խրախուսել ռադիո- և հեռուստատեսություններին քննարկման առարկա դարձնել հաշմանդամներին վերաբերող խնդիրները հաշմանդամներին ուղղակիորեն չվերաբերող ծրագրերի շրջանակում, ինչպես նաև կազմակերպել այդ խնդիրների քննարկմանը նվիրված հատուկ հաղորդումներ.
4. ձեռնարկել հաշմանդամների ներուժի, ձեռքբերումների և իրավունքների մասին պարբերական ծրագրերի անցկացում.
5. օգտագործել նորարարական և այլ մեթոդներ՝ իրազեկելու երեխաներին, երիտասարդներին և մեծահասակներին այն խնդիրների մասին, որոնց հետ առնչվում են հաշմանդամները.
6. աջակցել հաշմանդամներին և նրանց կազմակերպություններին ՋԼՄ-ներով իրենց խնդիրների բարձրաձայնման գործում տեղական և ազգային մակարդակներում.
7. տարածել համապատասխան տեղեկություններ հաշմանդամների կրթության, զբաղվածության և հանրության կյանքում մասնակցության դրական փորձի վերաբերյալ:

Գործողությունների ծրագրի իրականացում և վերահսկում

Անդամ պետությունների կառավարությունները պատասխանատու են հաշմանդամության քաղաքականությունը ազգային մակարդակով իրականացնելու և, մասնավորապես, Ծրագրում նշված կոնկրետ գործողությունների կատարման համար:

Ոլորտային (սեկտորային) պատասխանատվության սկզբունքի կիրառումը կարևոր դեր ունի քաղաքականության մշակման և ծառայությունների մատուցման ժամանակ, ավելին, այն առանցքային է Ծրագրի արդյունավետ իրականացման համար: Այս սկզբունքը թույլ է տալիս հաշմանդամներին օգտվել բոլոր ծառայություններից, որոնցից օգտվում են նաև այլ անձինք: Նպատակը մեկն է. անցում կատարել սեգրեգացիայից դեպի ինտեգրում: Սակայն միևնույն ժամանակ այս սկզբունքի կիրառումը չի նշանակում հաշմանդամների նկատմամբ կիրառվող հատուկ քաղաքականությունների վերացումը:

Ըստ էության, այս մոտեցումը նշանակում է, որ հաշմանդամության վերաբերյալ քաղաքականությունը այլևս առանձին նախարարության կամ բաժնի պատասխանատվությունը չէ: Ողջ պետական համակարգը պարտավոր է հաշվի առնել հաշմանդամների իրավունքները համակարգված մոտեցումների մշակման միջոցով:

Անդամ պետությունները պետք է նախևառաջ գնահատեն արդեն իսկ գոյություն ունեցող՝ հաշմանդամությանն առնչվող ռազմավարական ծրագրերը, և Եվրոպայի Խորհրդի գործողությունների ծրագրի համաձայն որոշեն, թե որ ոլորտներում առկա է զգալի առաջընթաց և ինչպիսիք պետք է լինեն ձեռնարկվելիք միջոցառումները:

Առաջնությունների և ժամանակացույցի որոշումը, բնականաբար, վերապահվում է յուրաքանչյուր անդամ պետության հայեցողությանը՝ միևնույն ժամանակ հանդիսանալով նրա պարտականությունը:

Կարևոր է, որ ծրագրի կատարումը անդամ պետությունների կողմից իրականացվի հաշմանդամների ՀԿ-ների և այլ շահագրգիռ կողմերի հետ համագործակցության պայմաններում:

Անդամ պետությունները պետք է հստակ սահմանեն հաշմանդամության հասկացությունը, թարգմանեն Ծրագիրը իրենց պաշտոնական լեզուներով և մատչելի դարձնեն դրա տեքստը բոլոր հնարավոր ձևաչափերով: Պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր միջոցները Ծրագրի կատարումն ապահովելու համար:

Անհրաժեշտության դեպքում, Եվրոպայի Խորհուրդը կաջակցի անդամ պետություններին Ծրագրի կատարման գործում: Անդամ պետությունները պետք է համագործակցեն Եվրոպայի Խորհրդի Զարգացման բանկի հետ և ներկայացնեն բանկային գործարքներ պահանջող ծրագրերը ազգային մակարդակում:

Անհրաժեշտ է, որ անդամ պետությունների պարբերականորեն տեղեկացնեն Եվրոպայի Խորհրդին Ծրագրի հետագա արդյունավետ կատարման վերաբերյալ: Այս առումով, հատուկ ուշադրության են արժանի ազգային կառավարության հաշվետվությունները Խորհրդարանին, ինչպես նաև ՀԿ-ների կողմից ներկայացված տվյալները և տեղեկատվությունը:

Եվրոպայի Խորհրդի կողմից ստեղծված մարմինը պարբերաբար իրականացնելու է Ծրագրի այս կամ այն փուլի կատարման վերահսկողությունը, կոնկրետ միջոցառումների համար վերջնաժամկետների սահմանումը և դրանց իրականացումը:

Այս մարմինը կարող է նաև առաջարկել առավել խորապես ուսումնասիրել որոշ հարցեր: Սա էլ իր հերթին կապահովի Նախարարների Կոմիտեի պարբերական իրազեկվածությունը Ծրագրի կատարման առաջընթացի վերաբերյալ:

Հաշմանդամների միջազգային ՀԿ-ները ևս պետք է մասնակցություն ունենան այս գործընթացին: Ավելին, այդ ոլորտում գործունեություն ծավալող այլ կազմակերպությունները ևս կարող են հրավիրվել մասնակցելու և իրենց ներդրումն ունենալու Ծրագրի կայացման գործում:

* * *

Վերջին տասնամյակում Եվրոպայում տեղի ունեցան բազմաթիվ քաղաքական, տնտեսական, սոցիալական և տեխնոլոգիական փոփոխություններ: Գլոբալիզացիայի հնարավորությունները, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացումը, զբաղվածության և գործազրկության, առողջապահության և դեմոգրաֆիայի, միգրացիայի ցուցանիշների փոփոխությունները, ինչպես նաև շուկայական հարաբերությունների կայացումը վերափոխեցին տարածաշրջանը: Այս փոփոխություններից շատերը դրական էին և ըստ էության նպաստեցին անձանց ակնկալիքների բարձրացմանը:

Փոխվել է ՀԿ-ների, և հատկապես հաշմանդամների ՀԿ-ների դերը: Այսօր նրանք համագործակցում են կառավարության հետ, տրամադրում հաշմանդամներին իրավական օգնություն, տարբեր բնույթի ծառայություններ և հանդես են գալիս որպես տվյալ ոլորտի կոմպետենտ մարմիններ:

Այսօր մեր մոտեցումը հիմնված է հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց՝ մարդու իրավունքների, հիմնարար ազատությունների և արժանապատվության հարգման վրա: Հետևաբար դա էլ հանգեցրեց այնպիսի քաղաքականությունների մշակմանը և իրագործմանը, որոնք թույլ են տալիս հաշմանդամին ղեկավարել իր կյանքը:

Մենք դադարել ենք ընկալել հաշմանդամին որպես խնամքի կարիք ունեցող հիվանդի, ով չի կարող որևէ ներդրում ունենալ հասարակության կայացման գործում: Այժմ մենք ընկալում ենք նրան որպես անհատի, ով գոյություն ունեցող խոչընդոտների վերացման արդյունքում կկարողանա գտնել իր տեղը հասարակությունում և դառնալ հասարակության լիարժեք անդամ: Այդ խոչընդոտները ներառում են և վերաբերմունք, և սոցիալական, իրավական և շրջակա միջավայրի անմատչելիության պատճենները: Պետք է հաշմանդամության բժշկական մոդելից անցում կատարել դեպի հաշմանդամության սոցիալական և մարդու իրավունքների մոդելի ճանաչումը:

| | |
|---|----|
| Նախաբան..... | 3 |
| Օրենսդրության վերլուծություն..... | 4 |
| Եվրոպայի Խորհրդի թիվ Rec(2006)5 Հանձնարարական | 20 |
| 1. Քաղաքական և հասարակական կյանք..... | 22 |
| 2. Մշակութային կյանք | 23 |
| 3. Տեղեկատվություն և կապ..... | 24 |
| 4. Կրթություն..... | 26 |
| 5. Զբաղվածություն և մասնագիտական ուսուցում..... | 28 |
| 6. Միջավայրի ֆիզիկական մատչելիություն..... | 30 |
| 7. Տրանսպորտ | 31 |
| 8. Ապրելակերպ համայնքներում | 32 |
| 9. Առողջապահություն | 34 |
| 10. Վերականգնում..... | 35 |
| 11. Սոցիալական պաշտպանություն..... | 36 |
| 12. Իրավական պաշտպանություն..... | 37 |
| 13. Պաշտպանություն չարաշահումներից և բռնությունից | 39 |
| 14. Ուսումնասիրություններ | 41 |
| 15. Իրազեկության մակարդակի բարձրացում..... | 42 |
| Գործողությունների ծրագրի իրականացում և վերահսկում..... | 44 |

Հեղինակ
Արմեն Ալավերդյան

Ասիստենտ
Իզաբելլա Կարապետյան

Շապիկի ծնավորումը
Դավիթ Բաբայան



Կոնտակտ տեղեկություններ

«Ունիսոն» հասարակական կազմակերպություն
Հասցե՝ Դեմիրձյան 36
Հեռ./ֆաքս՝ 52-21-70
Էլ. փոստ՝ unison@netsys.am
Վեբ-կայք՝ www.unison.am